


1422



p. 1907

2010

3K9
Պ-68

№ 9

Գրադարան «Կեանք»-ի

№ 9

Դ. ՊԼԵԽԱՆՈՎ



ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

ՈՅԺ ԵՒ ԲՈՆՈՒԹԻՒՆ

Հեղինակի խմբագրութեամբ և յառաջաբանով
Զիլբերի ուստական թարգմ.

Թարգմանեց՝ Յովակ.—Ս.

12001

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1894 թվի գարնան, երբ Ֆրանսիական անարխիստները յուզել էին ողջ բաղաքակիրթ աշխարհն իրենց «գործի պրօպագանդայ»-ով և երբ ես՝ գերմանական սօցիալ-դեմոկրատական կուսակցութեան Vorstand-ի յանձնարարութեամբ գրեցի «Անարխիզմ և սօցիալիզմ» գրքոյկը, ծերունի Լիբկնէխտն առաջարկեց ինձ գրել մեր գերմանացի ընկերներէ կենտրոնական օրգանում մի յօդուած՝ յեղափոխական տակտիկայի հարցը բնաբանով: Միրով կատարեցի ես այդ առաջարկը և ուղարկեցի Լիբկնէխտին «Ոյժ և բռնութիւն» յօդուածն, որ լոյս ընծայւեց այդ ժամանակ «Vorwärts»-ում: Լիբկնէխտը գրեց ինձ, որ նա շատ գոհ է այդ յօդուածով, իսկ իտալացի ընկերներն իրենց լեզուով փոխադրեցին այն և հրատարակեցին Միլանում «La tattica rivoluzionaria» (forza et violenza) վերնագրով: Այժմ ընկեր Զ. վերածելով այն ուսներէն, խնդրել է, որ ինքս յանձն առնեմ կատարելու այդ թարգմանութեան խմբագրութիւնը: Ես այդ յօժարութեամբ եմ կատարում՝ ի նկատի առնելով մանաւանդ այն հանգամանքն, որ իմ յօդուածը քաջաբանութեամբ սկզբնապէս գրւած էր Ֆրանսերէն

5-6646-ահ



2132-70

Թ Ռ Փ Լ Ռ Ս

Տպարան «Հերմէս», Մադաթիան փող. տ. № 5.

1907

(238)

լեզուով, յետոյ թարգմանել է գերմաներէն, ապա գերմաներէնից փոխադրել է իտալերէնի, իսկ իտալերէնից արդէն ռուսերէնի. շնորհիւ դրան իմ մտքերի հարազատ հաղորդւելու շանսերը բաւական կասկածելի էր դարձել:

Որովհետեւ այն ժամանակ, երբ ես գրեցի սոյն յօդուածն, անարխիական տակտիկան բերնէ բերան էր անցած, ուստի ես մի անգամ չեմ միայն մատնացոյց արել նրան՝ ի հաստատութիւն իմ մտքերի: Ներկայումս արեւմտքում համարեալ թէ այդպիսի հաստատումներ իրարէն չքաջել է, որովհետեւ այնտեղ հանդարտւել է անարխիզմը. բայց Ռուսաստանում նրանք դեռ անհրաժեշտ են, որովհետեւ անարխիզմը՝ մեր յեղափոխական շարժման այդ երիտասարդական սխալը, — գեղեցիկ կերպով ինչպէս նկատել է Ժելիաբովն իւր պաշտպանողական ճառի մէջ, — կրկին սկսել է ճարակել մեր հայրենիքը:

Հարկաւոր է, որ մեր գիտակից բանւորներն իմանան, թէ ինչո՞ւմ է կայանում մեր և անարխիստների տակտիկայի մէջ եղած հիմնական տարբերութիւնը:

Իսկ այդ իմանալուց յետոյ մեր գիտակից բանւորները հեշտութեամբ կ'ըմբռնեն, թէ ինչո՞ւ ես այնքան հակակրանք եմ տածում գէպի մեր նախկին «մեծամասնական»-ների տակտիկան: Վերջինիս մէջ չափազանց աղօտ է մարքսիզմը և ընդհակառակը մեծ տեղ է տրւած բլանկիզմին և նոյն իսկ անարխիզմին:

Նախկին «մեծամասնական» ներն առում են, որ ես իբր թէ տեղի ունեցած գէպերի նկատմամբ չեմ պաշտպանում այն տակտիկան, որն առաջ էի պաշտպանում: Բայց այդ ցոյց է տալիս, որ նրանք չեն հասկանում, թէ որո՞նք են իմ նախկին տակտիկական սյեացքները: Կարգացէք այս բրօշուրը և դուք կը տեսնէք, որ երբ ես գրել եմ այն, — ինչպէս ասացի, դեռ 1894 թւի գարնանը, սօցիալ-դեմօկրատիկական տակտիկայի վերաբերմամբ իմ հայեացքները նոյնն են, ինչ որ ներկայումս — մազ անգամ չեն փոխւել:

Ինձ համար շատ ուրախալի է համոզւելու այն բանում, որ իմ տակտիկական հայեացքները բաժանում են լիբէլնէիստը և իտալական մարքսիստները: Պակաս միւլթարական չէ տեսնել, որ իմ հայեացքներին չեն համակրում Լենինի կողմնակիցները. այդ երկու, միմեանցից այդչափ տարբերուող, պարագաներից իւրաքանչիւրը ներկայանում է ինձ համար իբր հաւասարապէս վստահելի ապացոյց յայտնածս մտքերին:

Գ. Պիկսանով

Բանւոր դասակարգի լիակատար ազատութեան համար մղուող կռիւ մէջ ռըպիսի տակտիկա պիտի բանեցնեն սօցիալիստները:

Ամեն մէկի համար պարզ է, որ այդ տակտիկայի վրայ ազդում են անհրաժեշտօրէն տեղական պայմանները: Այնուամենայնիւ սօցիալիստական կուսակցութիւնն, որպէս միջազգային կուսակցութիւն, պարտաւոր է մշակելու մի քանի ընդհանուր, անփոփոխ կանոններ, չը նայած ժամանակի և տեղի պարագաների այս կամ այն զանազանակերպութեան:

Բացի դրանից պէտք է ի նկատի ունենալ, որ մենք այստեղ չենք խօսում միջազգային սօցիալիստական կուսակցութեան վերջնական նպատակի մասին, որ բաւականաչափ յայտնի է ամենքին, այլ նրա տակտիկայի, կամ ելքէ կամենաք, նրա միջոցների մասին: Նպատակ և միջոցներ՝ երկու կատարեալ տարբեր հասկացողութիւններ են, և թէպէտ միջոցները պիտի համակերպուեն նպատակներին և ամեն ոք, որ ձգտում է սր և է նպատակի, պէտք է օգտուի համապատասխան միջոցներով, սակայն յաճախ է պատահում, որ կուսակցութիւնները դիմում են այնպիսի միջոցների, որոնք իրենց առաջադրած նպատակներին համապատասխանելու յաւակնութիւնը չունեն: Նոյն տեսակ սխալներ պատահում են և սօցիա-

լիզմի պատմութեան մէջ: Բօքերտ Օուէն և Ֆու-
րիէ անկասկած ձգտում էին յեղափոխական նը-
պատակների, բայց նրանք յուսով էին հասնելու
այդ նպատակներին լոկ խաղաղ միջոցներով:
Նպատակների և միջոցների միջև եղած այդ հա-
կասութիւնն՝ ուտօպիական սօցիալիզմի ամենա-
թոյլ կողմերից մէկն է հանդիսանում:

Մեր սօցիալիզմն՝ արժան չէր լինիլ կոչւե-
լու գիտական սօցիալիզմ, ինչպէս նրան ճանա-
չում են անգամ մեր հակառակորդներն, եթէ
մենք ևս ընկնէինք նոյն սխալի մէջ, եթէ որ մեր
նպատակների և միջոցների միջև գոյութիւն ու-
նենար հակասութիւն, որի ստուերն իսկ չը
պէտք է լինի:

Դեռ ևս քիչ է ասել՝ մեր նպատակը յեղա-
փոխական է: Մեր նպատակն իրօք ամենայեղա-
փոխականն է, քան այն բոլոր նպատակներն, ո-
րոնք մինչև այսօր յայտնի են մարդկութեանը:
Բայց անհրաժեշտ է, որ միջոցներն ևս այդ ա-
ւելի յեղափոխական նպատակի ներքին բովան-
դակութեանը համապատասխան լինելով հանդերձ,
լինէին յեղափոխական, միևնոյն ժամանակ
անհրաժեշտ է, որ նրանք հանդիսանան ամենա-
յեղափոխականն՝ երբ և իցէ գործադրած բոլոր
նորածէ միջոցներից:

* * *

Ուրեմն ինչպիսի՞ միջոցների պիտի գիմել
մեր նպատակներին հասնելու համար:

Անարխիստները պատասխանում են:—«Յե-

ղափոխական են այն միջոցներն, որոնք հակա-
ռակ են գնում օրէնքներին: Մինչ այն, քանի
որ դեռ դուք յամառութեամբ կը պնդէք ձեր ըն-
տրութիւններին մասնակցելու խնդիրը, քանի
դեռ ձեր ընտրեալներն ամբողջ էութեամբ
զբաղւած կը լինեն՝ յօգուտ բանւոր դասակար-
գի՝ բուրժուազիայի ձանկերից այս կամ այն բե-
ֆօրմները դուրս կորզելու հարցով, մինչ այն
ժամանակ, քանի դեռ դուք կը շարունակէք ան-
տես չառնել օրէնքներն, որոնք ձեզ զրկում են
թէ ազատ խօսքի և թէ այս կամ այն գործնէու-
թեան իրաւունքից,—մինչ այդ ժամանակ դուք
ընդհանուր առմամբ ոչ մի առնչութիւն չէք ու-
նենալ յեղափոխութեան հետ: Դուք կը լինէք
սոսկ օրէնսդիրներ և խաղաղ բարենորոգիչներ:

«Յեղափոխական գործնէութիւնը սկիզբն է
առնում այնտեղ, ուր խախտում է օրէնքը. հե-
տեապէս նա սկսւում է ապստամբութեամբ,
անհատի կամ ամբողջ մասնայի բռնի գործնէու-
թեամբ: Եւ որքան դուք ջերմ կերպով յարէք
ապստամբութեան և բռնի գործնէութեան, այն-
քան աւելի յեղափոխական կը լինէք»:

Շատ պարզ պատասխան է: Բայց տեսնենք,
թէ սրշափ է ճիշտ:

Ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ ա-
նարխիստների համար յեղափոխական միջոցները
և բռնի գործողութիւնները հոմանիշ են, միևնոյն
բանն են նշանակում: Բայց այդ նոյնացումն
ինչո՞վ է հիմնաւորւում:

Միջոցներից աւելի յեղափոխականն այն է, որ մեզ աւելի շուտ է հասցնում մեր նպատակին՝ յեղափոխութեանը:

Եթէ այս ենթադրութիւնը ճշմարիտ է,— իսկ տւեալ դէպքում անթոյլատրելի է որ և է կասկած,— պիտի դուրս բերենք հետեւեալ եզրակացութիւններն:

1. Որ կարող են գոյութիւն ունենալ ամենայնեղափոխական գործողութիւններ, որոնք բնական ամենահեռաւոր նմանութիւնն անգամ չունեն ապստամբութեան, բռնի գործնէութեան հետ:

2. Որ ապստամբութիւնը և բռնի գործողութիւնները միշտ հանգիստնում են հակայեղափոխական, երբ փոխանակ մեզ մօտեցնելու մեր նպատակին,— աւելի հեռու են կատեցնում նրանից:

Իսկապէս միայն վերջին կէտին են հասցնում մեզ անարխիական բռնի գործողութիւնները, կոյր պէտք է լինել այդ չը տեսնելու համար:

Յաջողւում է արդեօք անարխիստներին այս կամ այն տեղում ուռմբ նետել, կարողանում են արդեօք գործադուլաւորներին դէպի բռնութեան դրդել, կարողանում են ի կատար ածել զանազան մահաւճիռներ, թէ ոչ, այդ միևնոյնն է, նրանց բոլոր գործողութիւնները միակ մի նպատակի են բերում, այսինքն ուժեղացնում են ընկերային, որ նշանակում է նորանոր խոչնդոտներ յարուցանել բանւորական շարժման համար:

Անարխիական գործնէութիւնը, բռնութեան որ ձևի տակ էլ արտայայտւի, ներկայացնում է իրենից ոչ այլ ինչ, եթէ ոչ սոսկ հակայեղափոխական միջոց:

* * *

Դժւար չէ ըմբռնել, թէ ինչո՞ւն է կայանում այն սխալը, որ անարխիստներին իրենց բռնի գործողութիւնների մէջ նկատել հակառակը նրան, ինչ իրօք այդ գործողութիւններն են ներկայանում:

Օրինակի համար վերցնենք որ և իցէ յեղափոխութիւն.— անգլիական յեղափոխութիւնը XVII դ. կամ թէ ֆրանսիական յեղափոխութիւնը XVIII դարում, 1834—1848 թւականները: Դրանցից իւրաքանչիւրն երևան է հանում մեր առջև՝ բռնութիւնների, ապստամբութեանց, պատշէշամարտերի (բարրիկադ), զինւած ընդհարումների և կոտորածների մի երկար, արիւնոտ շարք: Հէնց այս բռնութիւններն են ձգում անարխիստներին մոլորութեան մէջ, որ մօտաւորապէս կարելի է այս տեսակ ձևակերպել. — «Որովհետեւ իւրաքանչիւր մի յեղափոխութեան ընթացքում տեղի են ունենում բռնութիւններ, ապա ուրեմն բաւական է միայն դիմել բռնի միջոցներին, որ բռնկէ կամ մօտաւորապէս յեղափոխութիւնը»:

Անարխիստներն այն մարդու նման են դատում, որ ասէր, թէ «որովհետեւ ամեն անգամ, անձինք և ռաւանք և անձինք և անձինք և անձինք»:

կայր փոելու, ապա ուրեմն բաւական է միայն փոել այդ օգտակար գործիքն, որ անձրեւ թափւի»։ Անարխիստների ամբողջ տակօրիկան պտրտում է այդ տարօրինակ սոփեստութեան շուրջը։ Դա միայն այն լաւ կողմն ունի, որ ծառայում է ամենալաւ ապացոյցը՝ բռնի և յեղափոխական միջոցների նոյնացման ամենածայրահեղ միամտութեան։

Մենք արդէն ասել ենք, որ այն միջոցն է ամենայեղափոխականն, որ եղածներից աւելի արագ է հասցնում մեզ առաջադրած նպատակին, յեղափոխութեանը։ Հետեալէս յեղափոխական պիտի կոչւի այն գործնէութիւնն, որ թուլացնում է՝ արդի քաղաքական և սօցիալական կարգերին պատուար հանդիսացող ոյժերը, և աւելի ոյժ է տալիս ապագայ հասարակական կազմի կողմնակիցներին։

Այդ երկու ոյժերի փոխադարձ յարաբերութիւնը յետեալ մտքով կախումն ունի իւրաքանչիւր երկրի առանձնայատուկ տնտեսական պայմաններից։ Գործնէութեան այն գործելակերպն, որ այդ պայմաններն է փոփոխում՝ ապագայ նոր հասարակական կարգերի կուսակիցներին զօրեղացնելու, ոյժերը շատացնելու մտքով, յեղափոխական է իր հետեանքներով։

Բայց ասել թէ որ և է միջոց յեղափոխական է իր հետեանքներով, այդ դեռ չի նշանակում ասել, թէ նա անպայման ընդունելի պիտի լինի յեղափոխականների կողմից։

Գործնական կեանքում շատ յաճախ է պատահում, որ բէակցիօն միջոցներն, որոնց օգնութեան դիմելով մեր թշնամիները ջանում են մեզ ջախջախելու, դառնում են չէնց իրենց դէմ և մենք առաւել ոյժ ենք ձեռք բերում, քան առաջ ունէինք։ Բայց դրանից դեռ չի հետեւում, թէ մենք պիտի պաշտպան կանգնենք նմանօրինակ բէակցիօն գործնէութեան։

Ոչ ոք չի կասկածում, որ այնտեղ, ուր իշխում է կապիտալիզմը՝ բերում է իր հետ միասին, վաղ թէ ուշ՝ ապստամբութիւն տիրող կարգերի դէմ, որ նա միաժամանակ կռում-կոփում է ապագայ հասարակութեան տնտեսական ֆակտորները և առաջացնելով պրօլետարների բանակը՝ միեւնոյն ժամանակ ստեղծում է իր սեփական գերեզմանափորերին։ Սակայն ուժ մտքովն անգամ կանցնի՝ այդ պատճառով իշխող կապիտալիստներին յեղափոխական կոչել։

Երբ կապիտալիստները առաջ են մղում տնտեսական զարգացման գործը դէպի ժամանակակից կարգերի օրհասական վախճանն, երբ նրանք նախապատրաստում են ապագայ յեղափոխութեան տարրերն, այդ նրանք ակամայից են կատարում, անգիտակցաբար։ Ընդհակառակը՝ նրանց գիտակցական գործնէութիւնն արտափայլում է ծայրահեղ պահպանողականութեամբ (կօսւելովատիվ)։ Իրենց ոյժերը ներածին չափ՝ նրանք դիմում են ամեն մի վճռական միջոցի, որ պահպանեն ներկայումս տիրող կարգերը՝ դժգոհ-

ների ոսնձգութիւններէց և յաճախ պրօլետարիատին շատ թանգ են արժենում այդպիսի ոսնձգութիւններն: Ակներն է, որ այդտեսակի գործնէութիւնն ընդհանուր առմամբ ոչ մի առնչութիւն չունի յեղափոխական գործի հետ:

Ուրիշ օրինակ: — Անարխիստները, — խօսքս այժմեան անարխիստներին է վերաբերում, — իրենց ուղղութեամբ՝ կողմնակից են յեղափոխութեան: Բայց իրօք նրանք գործիք են ծառայում սոսկ բէակցիայի նպատակներին:

Կապիտալիստներն, որոնք կողմնակից են statu quo-ին, այսինքն պաշտպան են այժմեան կարգերին, իսկապէս աւելի արագացնում են, ի հարկէ ակամայից, յեղափոխութեան ընթացքը: Առաջինները — խռովարարներ են, երկրորդները — պահպանողականներ. թէ սրանք և թէ միւսները հաւասարապէս հեռու են կանգնած յեղափոխական լինելուց:

Յեղափոխական է լոկ այն գործելակերպն, որ մի կողմից զարկ է տալիս յեղափոխութեան ոյժին, իսկ միւս կողմից՝ համապատասխանում է այդ գործելակերպի կիրառողների նպատակներին:

* * *

Գործարանային կանոնադրութիւնների շնորհիւ սրուել սահմանները կապիտալիստական շահագործման, դիւրութիւն տալ յաղթանակելու այդ սահմաններում վարձու աշխատանքի քաղաքատնտեսութեանը՝ կապիտալի քաղաքատնտե-

սութեան հանդէպ, — այդ նշանակում է՝ փոփոխել երկրի տնտեսական պայմաններն ըստ յեղափոխական ոգու: Իւրաքանչիւր մի գործնէութիւն, որ այդ նպատակին է հետևում՝ յեղափոխական գործնէութիւն է, անկախ նրանից, թէ որպիսի ձևեր է ընդունում, — բռնի միջոցներով կը հասնէ այդ նպատակին թէ՛ խաղաղ ագիտացիայի եղանակով:

Բացի դրանից, որքան հուժկու է պրօլետարիատի ոյժը, այնքան աւելի հեշտ է, — ընդհանրապէս վերցրած, — այդպիսի բեֆօրմներին հասնելը՝ խաղաղ և օրինական միջոցներով: Սիբիւրի ոսկու հանքերում աշխատող բանւորներն ամբողջովին ենթակայ են նախաձեռնողի իշխանութեան, որը օժտւած է անսահման իրաւունքներով՝ մարմնական պատժի ենթարկելու վերաբերմամբ: Այդ թշուառ բանւորների համար բռնութիւնը միակ ինքնապաշտպանութեան միջոցն է, յամենայն դէպս, կապիտալի կողմից իրենց հասցրւած ծաղր ու ծանակի և հայհոյանքի համար վրէժխնդիր լինելու միակ միջոցը:

Արեւմտեան Եւրօպայի և Հիւսիսային Ամերիկայի բանւորները կարիք չունեն փշացնելու մեքենաներն, որպէսզի ծեծւած չը լինեն իրենց տէրերի կողմից. իրենց շահագործողների դէմ կռիւ մղելու համար նրանք օժտւած են բազմաթիւ իրաւական միջոցներով: Հրաժարւել բանւոր դասակարգի նւաճած այդ միջոցների գործադրութիւնից, — կը նշանակէ յօգուտ բուր-

ժուլազիայի հրաժարել այն իրաւունքներէ, որոնք ձեռք են բերւած այնքան ծանր զոհերով, կը նշանակէ անհեթեթ յիմարութիւն գործել, մի բան, որ երբէք չի անիլ պրօլետարիատն, ինչ որ էլ խօսեն կամ գործեն պարոնայք անարխիստներն, որոնք երազում են՝ բռնութիւնը բռնութեան համար:

* *

Այս կէտում գուցէ առարկեն, թէ մենք բարոգում ենք՝ պետական սօցիալիզմ:

«Եթէ մեզ կասեն, թէ դուք այդչափ անագին նշանակութիւն էք տալիս գործարանային օրէնսդրութեանը և զանազան տեսակի բարենորոգութիւններին, ապա էլ ո՞ւր մնաց ձեր և Բիւմարկի կամ ո՞ր և իցէ գործարանային օրէնսդրութեանց ծրագրերի մշակմամբ պարապառող ուսական միւստրի գործնէութեան միջև եղած տարբերութիւնը»:

Ահա թէ ինչ պատասխան կը տանք դրան:

1. Այսպէս կոչւած պետական սօցիալիզմը կայանում է մի շարք զիջողութիւնների մէջ, որոնք շնորհիւ սօցիալիստների դուրս են կորզւած շահագործողների դասակարգից: Ով չի հասկանում, թէ ինչ տարբերութիւն կայ պետական սօցիալիզմի և դեմօկրատիկական սօցիալիզմի միջև, նա երբէք չի հասկանալ և այն, թէ ինչպիսի տարբերութիւն կայ այն կառավարութեան գործողութեան եղանակի մէջ, որ ստիպւած զիջում է իւր հարեանին գաւառը գաւառի

յետեից, և այն հարեանի գործողութեան եղանակի մէջ, որ խնդրութեամբ միացնում է նրանց մէկը միւսի ետեից իւր երկրի սահմաններին:

2. Պետական սօցիալիստների կողմից սօցիալ-դեմօկրատներին արւած զիջողութիւնների նպատակն ըստ էութեան կատարեալ պահպանողական է: Այդ զիջողութիւնների օգնութեամբ նրանք յուսով են վերջ դնելու դասակարգային կռիւն, որ ժամանակակից սօցիալիստական շարժման բուն ոգին է: Պետական սօցիալիստներն ամբողջ ոյժով աշխատում են թագցնել պրօլետարիատից այն անհանդուրժելի անջրպետը (անտագօնիզմ), որ գոյութիւն ունի իրենց և վերջիններիս շահերի մէջ: Նրանք, կարողութեան չափ, աշխատում են յետ կասեցնել բանւորներին՝ իւրեանց դասակարգային զիտակցման զարգացումից, մինչդեռ սօցիալ-դեմօկրատներն իրենց առաջին պարտականութիւնը և ամենամեծ խնդիրն են համարում այդ զիտակցութեան զարգացումը:

II.

Ֆիզիքական ոյժը միշտ ճնշւածների կողմն է եղել: Եթէ վերջիններս չեն դիմում նւրան, իբր ինքնազատման միջոցի, այդ միայն ապացուցանում է, որ ֆիզիքական ոյժն, ինքն ըստ ինքեան, դեռ ևս յեղափոխական գէնք չէ, և որ միակ նրանով անհնար է իրականացնել յեղափո-



խական գործը և որ նա ամենեւին չի հանդիսա-
նում անհրաժեշտ պայմանն իւրաքանչիւր յեղա-
փոխութեան: Որպէսզի բանւոր դասակարգը կա-
րողանայ յօգուտ իրեն գործադրել իւր ֆիզիքա-
կան ոյժը, դրա համար պէտք է, որ նա ձեռք
բերի իւր այժմեան վիճակի պարզ գիտակցու-
թիւնը և իմանայ, թէ ի՞նչ պայմաններում կարող
է ստանալ իւր ազատութիւնը: Մեզ որքան ա-
ւելի յաջողի զարգացնել պրօլետարիատի դա-
սակարգային գիտակցութիւնն, այնքան առաւել
ոյժ կը ստանան ճնշւածները և այնքան աւելի ե-
րբեուն կը դառնայ ժամանակակից իրերի դրու-
թիւնը:

Անցեալ դարու յեղափոխականները և ֆրան-
սիացի փիլիսոփաներն ոչ մի արգելքի առաջ կանգ
չէին առնում՝ դատաւիտելու հին կարգերը: Նը-
րանք անողոք կերպով խաբազանում էին բոլոր
տեսակի իշխանութիւններն, — երկրային թէ երկ-
նային, — նախապատրաստելով բուրժուազիայի
յաղթանակը: Բայց որովհետեւ բուրժուազիայի
գոյութեամբ պայմանաւորւած է և պրօլետա-
րիատի շահագործումն, ապա ուրեմն և այն ժա-
մանակեայ իդէօլոգների գործը յեղափոխական
է միայն կիսով չափ: Չընայած իրենց «լուսաւո-
րութեան», այդ լուսաւորիչներն իւրեանց հոգու
խորքում արհամարհում էին մասնային և իրենց
գիտութիւնը մատակարարում էին միայն բուր-
ժուազիային: Այդ ժամանակ աշխատաւոր, բան-
ւոր ժողովուրդը քնած էր խորունկ, յարատեւ քնով:

Սօցիալիստ-ուտօպիստներին արդէն օտարօ-
տի է թւում արհամարհանքը՝ դէպի թշուառ,
աշխատաւոր մասսաներն, որոնց ազատագրու-
թեան գործով այնքան բուռն կերպով մտորել
էին նրանք և որոնց ինքնագիտակցութեան զար-
գացման համար այնքան շատ բան էին արել, —
չը նայած համարեան թէ ակամայից: Այն, դէպի որը
նրանք ձգտում էին, ոչ թէ կռիւն էր դասակար-
գերի, այլ վերջիններիս հաշտեցնելու փորձը, ո-
րովհետեւ նրանք համոզւած էին, որ կապիտա-
լիստական սիստեմի վերացումը հնարաւոր է՝ հա-
սարակութեան համայն դասակարգերի գործակ-
ցութեամբ:

Ահա թէ ինչու համար նրանք դիմում էին,
առանց ո՞ր և իցէ զանազանութեան, մերթ շա-
հագործողներին, և մինչև անգամ նախապատ-
ուութիւնը տալիս էին յատկապէս շահագործող-
ներին, որոնց հարստութիւնը և կրթութիւնը ծա-
ռայում էր որպէս գրաւական նրանց մեծապէս
օգտաւէտ հանդիսանալուն՝ հասարակական բա-
րենորդման գործի ասպարիզում:

Մինչդեռ ֆրանսիական լուսաւորիչները յե-
ղափոխականներ էին միայն կիսով չափ՝ ըստ
իւրեանց վերջնական նպատակի և առաջադրած
միջոցների, սօցիալիստ-ուտօպիստներն իրենց
վերջնական նպատակով ներկայանում են արդէն
որպէս կատարեալ յեղափոխականներ, բայց սը-
րանք, ինչպէս մենք արդէն ասացինք, ուզում
էին հասնել այդ նպատակներին բացառապէս
խաղաղ միջոցներով:

Գիտական սօցիալիզմի հիմնադիրները, — սօցիալիստ-դեմօկրատներն, առաջինն եղան, որ ուղղակի դիմեցին աշխատաւոր մասսային, որից այնքան վախենում էին և որին այնքան արհամարհում էին «վերածնութեան» դարի յեղափոխականները: Դեմօկրատների գործնէութեան ամբողջ առարկան այն է, որ ի մի հաւաքեն այդ մասսաներին իւրեանց սեփական-յատուկ դրօշակները շուրջն, որ կազմակերպեն ժամանակակից պրօլետարիատը: Նրանք քարոզեցին այդ մասսային ոչ թէ դասակարգերի խաբուսիկ հաշտութիւնը, այլ նրանց կռիւը. այդ կողմից նրանք եղան յեղափոխական ո՛չ թէ միայն իւրեանց նպատակներով, այլ և նոյնպէս իւրեանց միջոցներով:

Այնտեղ, ուր պրօլետարիատը հասկանում է, թէ ո՞րն է իր սեփական ազատութիւնը, նա վաղ թէ ուշ կ'ըմբռնէ իր սեփական շահերի և բուրժուազիայի շահերի հակասութիւնը: Սօցիալիստները բացատրում են նրան դասակարգային անտագօնիզմի բնոյթը, և թէ այդ անտագօնիզմից ի՞նչ քաղաքական ու սօցիալական հետեանքներ կարող են առաջանալ. և իրենց ուսուցմամբ նրանք կեանքի մէջ յարուցանում են այնպիսի յեղափոխական ոյժ, որպիսին մինչ օրս չի եղել, չընայած այն օրինական ձևերին, որ կարող է ընդունել այդ յեղափոխութեան արտայայտումը: Պրօլետարիատի դասակարգային գիտակցման զար-

ամենայեղափոխական միջոցն է, գլխաւոր առանձնայատուկ գծերից մէկն, որ ընդհանուր է զանազան երկրների բոլոր սօցիալիստական կուսակցութիւններին, — կամ աւելի ճիշտ ասած, ամեն մի երկրի սօցիալիստական կուսակցութեանը: Այս միջոցը մտնում է միշտ անփոփոխ, չընայած տեղի և ժամանակի տարբերութեանը:

Աշխարհի գոյութեան սկզբից ի վեր, երբ մարդկութիւնը ձգտում է առաջ գնալ պրօգրէսի ճանապարհով, շահագործւողները սկսում են հասկանալ իրենց ճնշած լինելու պատճառները և հաստատապէս վճռում են վերջ տալ՝ մարդը մարդուն շահագործելուն: Աշխարհի բոլոր բռնի կերպով առաջ բերած բռնկումները, հին, բօմանտիկական շփոխի յեղափոխութիւնների ամբողջ հմայքը՝ համեմատած արդի մեծ շարժման հետ — ոչ այլ ինչ են, եթէ ոչ անմեղ մանկական խաղեր: Եւ դրա համար մենք կատարեալ իրաւունք ունենք պնդելու, որ ժամանակակից յեղափոխականների գործադրող սիջոցներն ամենայեղափոխականն են, որպիսիք միայն կարող ենք ենթադրել, անկախ այն հանգամանքից, թէ նրանք ինչ գործելակերպ են ընդունում, իրաւական կուլի, թէ բռնի գործողութեան:

*
* *

Շատ են խօսում այն մասին, թէ սօցիալիստները չը պէտք է մտնեն զիջողութիւններ մէջ՝ բուրժուաների հետ: Նրանք, ովքեր որ այսպէս են ասում՝ ետաւոր են: Բայց ո՞րն է բուր-

ժողովներին արևած զիջողութիւն: Երբ պրօլե-
տարիատը միացած լիբերալ բուրժուազիայի հետ
միաժամանակ կռիւ է մղում Ֆէօդալիզմի դէմ,
արդեօք չէ՞ թւում, թէ պրօլետարիատը դաշն է
կռել բուրժուազիայի հետ: Ամենին ոչ, որով-
հետեւ իւրաքանչիւր զիջողութիւն, որ անում է
բուրժուազիային, մի քաղաքական պայմանա-
դրութիւն է, որ այս կամ այն ձևով պէտք է
պահպանէ բանւորների դասակարգային գիտակե-
ցութեան զարգացումն: Որչափ մի ուրիշ է եր-
կրրի սօցիալիստական կուսակցութեան տակտի-
կան նպաստում է այդ գիտակցութեան
պարզաբանութեանն, այնքան ծիծաղելի է խօ-
սել զիջողութիւնների մասին, ինչ տեսակ էլ որ
լինեն սօցիալիստների ժամանակաւոր յարաբե-
րութիւնները դէպի միւս քաղաքական կուսակ-
ցութիւնները:

Մեր բեկդիացի ընկերները կռիւ են մղում
կողք-կողքի մանր բուրժուազիայի հետ միասին՝
յանուն ընդհանուր ընտրողական իրաւունքի:

Բայց ո՞ր միամիտ մարդը կը մեղադրէ նը-
րանց՝ համարելով այդ մանր-բուրժուազիային
արևած զիջողութիւն: Յանուն ընդհանուր ընտ-
րողական իրաւունքի մղող պայքարը հան-
դիսանում է նրանց ձեռքում որպէս մի հզօր
միջոց՝ զարգացնելու դասակարգային գիտակցու-
թիւնը բանւորների մէջ և վերջիններիս դար-
ցնելու արժանավայել յեղափոխական գործին:

Բեկդիացի բանւորները պայքարը տեղիք է
տալիս ամեն տեսակի բռնութեան, բայց ինչպէս
այս, այնպէս և բոլոր դէպքերում, շատ ծաղրա-
լի կը լինի շփոթել քոնուսիսն ան ուսի հետ:

որ երևան է հանում պրօլետարիատն իւր դա-
սակարգային գիտակցութիւնը պարզաբանելիս:

Սօցիալիստ-կուսակցութիւնները սկզբունքով ժըխ-
տում էին բռնի միջոցները, միւս կողմից ընկնում
տեսական (դօքտրինօր) վարդապետութեան գիր-
կը: Սօցիալ-դեմօկրատները չեն ժխտում ստի-
պողական միջոցներն, ինչպէս և չեն հրաժար-
ւում խաղաղ ագիտացիայից. նրանք շատ լաւ գի-
տեն, որ որոշ դէպքում բռնի միջոցներն անխու-
սափելի են: Բայց իմանալով այդ, միևնոյն ժա-
մանակ և իմանալով են այն, որ և կարևոր են
դաժնում ի գիտութիւն ամենի յայտնելու, թէ այդ
ստիպողական ոյժի և բռնութեան միջև խոր ան-
դունդ կայ: Եւ սօցիալ-դեմօկրատները հէնց նը-
րան են ձգտում, որ ձեռք բերեն միայն և մի-
այն այդ ոյժն: Ինչ վերաբերում է բռնութեան,
նա կարող է գործադրել միմիայն որոշ դէպ-
քերում: Քաղաքակիրթ երկրների իրերի արդի դը-
րութեան ժամանակ՝ հէնց իրեն պրօլետարիատի
շահերի տեսակէտից՝ չը պէտք է հրապուրել
բռնի գո ծնէութեամբ *):

*) Ծանօթութիւն հեղինակի ուսական հրատարա-
կութեանը: Սօսելով քաղաքակիրթ աշխարհի ժամանակա-
կից դրութեան մասին, հասկանալի է, որ ես ակնարկում
էի այն ժամանակաւ Արևմտեան Եւրօպան և Հիւսի-
սային Ամերիկան: Արդի Ռուսաստանում պրօլետա-
րիատի օրինակն գործունէութեան համար եղած
սահմանները չափազանց նեղ են: Բայց այստեղ ևս
պրօլետարիատը չը պէտք է մոռանայ այն հանգաման-
քը, որ բռնի գործունէութեան եղանակով կարող է կրել
անողոր պարտութիւն: Մեզ մօտ ևս բանւոր դասակար-
գի գիտակից բարեկամները պէտք է լաւ ըմբռնեն,
որ բռնութիւնը հոմանիշ է ոյժին, և որ պրօլետա-
րիատի, որոշ դէպքում, ցոյց տաւ՝ բռնի գործունե-
թիւնը կարող է յետ պահել նրա ոյժերի զարգացումը:

Ահաւասիկ այս պարագաներն են մեզ հրահանգում՝ քարոզելու խաղաղ և օրինական ազդեցութիւնը:

Սակայն, նոյն իսկ այն դէպքում, երբ մենք ժխտում ենք բռնի գործելակերպը, չենք դադարում զարգացնելու պրօլետարիատի յեղափոխական ոյժը և նախապատրաստում ենք նրա ապագայ յաղթանակը:

Դասակարգային կռիւն սովորաբար համեմատում են պատերազմի հետ: Վերջինս, իհարկէ, ներկայացնում է իրենց բազմաթիւ բռնի գործողութիւնների մի շարան: Բայց չի գտնւի ոչ մի յիմար ենթասպայ, որ չիմանայ այն մեծ զանազանութիւնն, որ կայ զօրքի ոյժի և այն ամեն տեսակի բռնութիւնների միջև, որ գործադրւում է նոյն այդ զօրքի միջոցով, և որ չիմանայ, թէ անժամանակ բռնի գործողութիւնները վնաս են բերում լոկ այն ուժին, որին նա է ապաւինում:

*
* *

Մեր մտքերի արտայայտման դրդիչ պատճառներ դարձան մայիսի մէկի տօնի առթիւ լոյս տեսած լրագրային յօդուածները: Այդ տօնի նպատակն է—աւելի ոյժ տալ պրօլետարիատին դասակարգային գիտակցման զարգացողութեամբ:

Բայց կան մարդիկ,—և բոլորովին խելացի մարդիկ,—որ շփոթում են ոյժը բռնութեան հետ և միամտութեամբ զարմանում, թէ ինչպէս են սօցիալիստները դեկլարւում տեղական պայմաններով և իրենց կուսակցութեան ապագայի հետ խաղաղաց հրաժարւելով՝ մի քերկու օստիկանական արգելքներ խափանելու ին հաճոյքը չեն գտնում:

148

27

2013
ՀՀ Ազգային գրադարան
1422

NL0034666

